

թյան մեջ բազմաթիվ տեղեկություններ կան Զանգեզուրում, Մեղրիում ու Ղարաբաղում տարածված մի , հիվանդության , մասին, որը հայտնի է Խըլլացակ կամ Խողլացակ անունով /խաղէ/ Խըլլ՝ պար ցակ բառարմատներից :

Հիվանդությունն այսպես է կոչվում այն պատճառով, որ դիվանարկածին՝ շարով ընկածին, օրոժում են պարով ու երաժշտությամբ : Դա արկել է խիստ զաղոտնի, առանց ժամանակի պայմանավորվածության և առանց տարիքի ու սեռի ընտրության : Արարողությունը տեղի է ունեցել նվիրատվությամբ և մեծ հյուրասիրությամբ :

Խաղլացակի վերաբրուկները և դրանց մասին վկայությունները, կապված որոշակի գեղեցերի հետ, պահպանվել են մինչև 20-րդ դարի երկրորդ կեսը, անզամ մինչև Հայրենական մեծ պատերազմը, իսկ հիշողությունները, վկայություններն ու քաժանան նպատակով որոշ գործողությունները՝ մինչև մեր օրերը :

#### Է. Խ. ՊԵՏՐՈՎՍՅԱՆ

ՀՍՍՀ ԱՇՏԱՐԱԿԻ ՇՐՋԱՆԻ ՀԹԽՈՒ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՀ-  
ՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Արդի հասարակության էթնիկական պրոյեսների պրոբլեմատիկայի հարցում մեծ տեղ է զբաղեցնում ազգային կողմնորոշումը, որի դրսեփորման կարևոր միջոցներից մեկը ժողովրդական մշակույթին է : Ներկա դեպքում մեր ուսումնասիրության առարկան երաժշտությունը, պարագաստը, ժողովրդական թատրոնը և ինքնագործունեությունն է :

Ուսումնասիրության նպատակն է.

1. Բացահայտել ավանդական մշակույթի տարբեր ձևերի պահպան-վածությունը տարբեր հասակային սոցիալական խմբերում :

2. Պարզել ազգագույն խմբերի ավանդական մշակութային փոփոխման աստիճանը և զարգացման ուղղությունները ժամանակակից պայմաններում :

3. Պարզել գյուղական ընակչության կողմնորոշումը ժողովրդական ու պրոֆեսիոնալ մշակույթի նկատմամբ :

Աշխատանքը կատարնել է Աշտարակի շրջանում ապրող ազգագրական տարբեր խմբերի հետ: Պարզել է հետևյալը. քուրո խմբերը պահ-

պանել են իրենց մշակույթի որոշակի հատկանիշները։ Անկախ սոցիա-  
լական ու տարիքային կազմի մշակույթը ոչ թե ծուլվել, այլ ազդե-  
ցություններ է կրել։ Երիտասարդությունը գերազանցությունը տալիս  
է ժողովրդական ստեղծագործությանը։ Ներկա պայմաններում տեղի է  
ունենում նոր կենցաղի տեղայնացում, որն արտահայտվում է հա-  
զուստի, ընակարանի, ժողովրդական ու պրոֆեսիոնալ արվեստում, թաղ-  
ման, հարսանեկան և այլ արարողություններում։ Ամում է հետաքրքրու-  
թյունը դեպի գործիքային արվեստը, ինքնազործունեությունը։ Առաջա-  
ներթ է դառնում դրամատիկական և պարային արվեստը։ Նկատվում է  
մեծ հետաքրքրություն դեպի հարևան ժողովուրդների մշակույթը։

Առաջնակարգ նշանակույթյուն ունի նաև պարարվեստի, եղածշու-  
թյան և առհասարակ հնքնագործունեության հետազ զարգացման հարցը։

#### Կ.Ա.ԱՎԱԳԻԳՅԱՆ

ԲԱՆԱՀՑՈՒՄԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՔ ՀՈԿՏԵՄՐԵՐՅԱՆԻ  
ՆՎ ԱՇՏԱՐԱԿԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

1. 1974-1975թթ. գրառվել են բանահյուսական նյութեր Աշտա-  
րակի շրջանի Կարգի, Փարպի, Օշական, Ոսկեվազ, Բյուրական, Ուշի,  
Ուշան և Հոկտեմբերյանի շրջանի Այգեշատ, Մրգաշատ, Բամբակաշատ,  
Փշտավան, Հոկտեմբեր, Մարգարա գյուղերից։

2. Ցուրաքանչյուր շրջանում բանահյուսական ավանդույթները  
և բանահյուսական նյութերի կենցաղավարումը յուրահատուկ պատկեր  
ունի։ Աշտարակի շրջանում, հատկապես, տարածված են ծիսական ու  
կենցաղային երգերը և խաղիկները, Հոկտեմբերյանի շրջանում՝ առա-  
վելապես բանածեային փոքր ժանրի ստեղծագործությունները/առած,  
ասացվածք, օրհնանք, անեծք, աղոթք/։

3. Հատկանշական է, որ երկու շրջաններում էլ հերիաթը  
կորցրել է ժանրային նկարագիրը, չունի սյուժենային հետևողական  
զարգացմունք և ներկայացնում է այլափոխված վիճակ։

4. Աշտարակի շրջանում ընիկ տեղական տրարատյան խոսկածքը  
պահպանվել է Աշտարակ, Օշական, Փարպի, մասամբ նաև Կարգի գյուղե-  
րում, իսկ Ոսկեվազ, Ուշի, Ուշան և այլ գյուղերում տիրապետող  
են Հայաստանի պատմա-ազգագրական տարրեր շրջանների բարքառներն  
ու խոսկածքները։

